33. ՔՅԱԼ ՕՂԼԱՆ

Թագավորի մեկը տղա հեչ չի ունենա։ Օրվա մեկը մե դավռուշ նե մտնի կը տունը, կ'ըսե կը թը.— Թագավոր սաղ կենաս, դու ինչի՞ կը մտածես։

Կ'ըսե կը.— Հապա մտածմունքս էն է օր, ես թագավորն եմ, մե էրեխեմ չունեմ օր երեսն աշեմ, իմ խաղնես, իմ գաբդաբես, իմ էղ-նըվածն մնա իմ տղին՝ իմ մեռնելես ետև։

Դավռուշը կ'ըսե կը.— Ես քեղի հետ կապացկութեն կէնեմ, քեղի էրկու մանչ տղա կուտամ, մեկը քեղի, մեկը ընձի։ Էս խնձորը առ քեղի, խնձորը կպճես կը, կպեճները կուտաս ձիուդ, մեկել երկու դիլիմները մեկը դու կուտես, մեկելը կուտաս կնկանդ։

Թագավորը խնձորը գոտկին՝ կէրթա ներս քնելու, կնիկը տեսնի կը խնձոր ընկավ գոտկիցը, ըսավ.— Է՞ս ինչ խնձոր է, երիտասարդությունդ նո՞ր միտքդդ գըյնի կը, թագավոր սաղ կենաս։

Կ'ըսե կը.— Սուլթան, էս խնձորի մեշը քարամաթ կա։

Կ'ըսե կը.— Ի՞նչ է քարամաթը։

Կ'ըսե կը.— Էսիկ էն խնձորն է, օր մենք ուտենք՝ մեղի, աստծու կարող զորութենով, էրկու հատ տղա կ'էղնի։ Կպեճներն էլ տանք ձիուն, էրկու հատ քուռակ կ'էղնի։

Ու խնձորը կերան, կպեճներն էլ ձիուն տվին։

Ինն ամիս, ինը սահաթ, ինը դախա աստծով էդ տղեքը դուքան աշխարք։ Թագավորը կաշե օր ձին ցնկնե՝ երկու քուռակ է բերե։

Էս հեղին տղեքը տվին ուսումնարան։ Կարթան կը տղեքը, ամեն լեզուն էլ սորվան, չափահաս էղան։

Օրվա մեկը էն դավռուշը գուքա կըսե կը.— Մեր կապացկութեն ի՞նչ է, թագավոր սաղ կենաս։

Կ'ըսե կը.— Մեր կապացկութեն էնա՝ աղոց մեկը քեղի, մեկն ընձի։

Սուլթանը կ'ըսե կը.— է՛, թագավորը սաղ կենա, մենք ի՞նչրխ մեր տղեն տանք գավռուշին։— Ու շա՛տմ գուլա։

Թագավորը կըսե կը.— Սուլթան, ի՞նչ էնենք, մեր կապացկութեն է՛ս է, սրպանվի էլ պիտի տանք։

Էս հեղին կ'ըսե կը.— Դավռուշ բարա,— Սուլթանը կըսե կը,— էսօր դնա, վաղն արի՛, մենք մեր պատրաստութենը տեսնենք։

Սուլթանը կըսե իր էրկու տղին՝ վե՞րըգ պիտի էրթաք։

Մեկը կ'ըսե կը.— Ես կէրթամ, իմ ղագարս է, սաղ մնամ պիտի էրթամ։

Էն մեկել օրը գավռուշը բիրգան գուքա նե կը մտնի։ Գուքա կըսե կը.— Քելե էրթանք, տղա՛։

Էս հեղին ձին կը հեծնի էդ մանչը, հերը գուլա, մերը գուլա, ախպրտանքն իրար փաթտվին գուլան։

Գըյնի գավռուշի ետև կէրթա կը էդ տղեն։ Դավռուշը տանի կը անվերի սարի գլուխ։

Կ'ըսե կը.— Այսի՛կ է մեր տունը։.

Մտնի կը էդ տունը։ Ձինը զարկե կը արծելու, էդ տեղ կենա կը մե ամիսըմ։

Դավռուշը իրկունը գուքա քովը։

Կ'ըսե.— Դավռուշ բաբա, ես հերիք չէ՞ էստեղ կենամ պարապ, ես պիտի էրթամ էս երկրեն դուս։

Կ'ըսե կը.— է, դու հ'ո՞ւր պիտի էրթաս։

Կ'ըսե կը.— Ես պիտի էրթամ պտտվիմ, աշխարք ժուռ գամ։

Կ'ըսե կը.— Օղուլ, դու կէրթաս իսա՝ էս կանաչ լըբուղը քեղի կուտամ։ Քեղի կուտամ էսիկ, օր ինչքան նեղը գըյնիս իսա, էս լըբուղը զարկես ըսես. «Ես էսքան նեղութենի մեջ եմ, ընձի լենը հանե»։

Էս հեղին էդ մարթը ձեռքը կը պագե, գըյնի կը ճամփա։

Գելլե կէրթա կը։ Շատ կէրթա, քիչ կէրթա մե քաղքիմ քըփնա կը։

Կէրթա կը տեսնե օր հովիվըմ օխլար կարծեցնե կը, հովիվին կըսե կը.— Ընձի մեկ գառըմ մորթե։

Հովիվը դառը տիկ կը հանե։ Կը հանե էդոր էրկու օսկի կուտա մեկ գառին։

Կըսե կը.— Էգ գառի փորը ընձի տու։

Էդ դառի փորը կառնե՝ իրեն գլուխը կը դնե, կէղնի Քյալ օղլան։ Կէրթա էդիկ մե բոստնիմ քով։ Բոստնին կէղնի խզմաթչի[1]։

Բոստընչին կ'ըսե կը.— Ի՞նչ տամ քեզի իրավունք, ձագըս։

Կ'ըսե կը.— Ես մե խեղճ քասիբ մարթմ եմ, ինչ կուտաս՝ քու խիղճդ։

Էդ մարթ էդոր հետ կաշխատի։

Օրվան մեկը ձմերուկը հասնի կը, կառնի կէրթա կը էդ մարթը թագավորի տուն։

Թագավորին իրեք հատ ախչիկ կա, տանի կը ձմերուկները կուտա էնոնց։

Ախչիկները կառնին կը տանին, բայց չեն ուտե։

Մենծ ախչիկը մեծ ձմերուկին ղարկե կը իրեն դանակը, օրթանչիը՝ օրթա ձմերուկին կը ղարկե իրեն դանակը։ Պզտի ախչիկը պըզտի ձմերուկին ղարկե կը իրեն դանակը։

Լալին կը կանչեն։ Լալեն սինով կառնի կը ձմերուկը, տանի թագավորի առաջը վեր կը դնե։

Լալեստանցը կըսե թագավոր.— Էդ ի՞նչ ձմերուկ են։

Լալեստանքը կըսեն.— Հլե կտրե՛, տեսնես կը։

Կտրե կը ձմերուկները, թագավորը կը տեսնի օր մեծ ձմերուկը մեծ ախչկանն է՝ լեկել է, չի՛ ուտվի, օրթա ձմերուկն է՝ կուտվի վայնաչար։ Պզտի ձմերուկը կը կտրե, կը տեսնի օր լա՜վ ուտելու ձմերուկ է։

Թագավոր, վեքալեստանք խորուրթ կ'էնե, կ'ըսե կը.— Էսորեն ի՞նչ հասկըցաք։

Լալեստանք կըսեն կը.— Էս ձմերուկները, մենծն օր անցել է, քու մենծ ախչիկն է, ժամանակն շատ անցել է։ Օրթա ձմերուկն՝ օրթանչիլ ախչիկն է, իշտա վայնաչար կուտվի։ Պզտիկը՝ պզտի ախչիկն է՝ օր լավ նշանվելու ժամանակն է։

Թագավորը կանչե կը սադրազանին։

Կ'ըսե կը.— Էս քաղքի ժողովուրթ բիթուն իմ պալատիս առաջը թոփ էղնին։ Իմ ախչիկներ տեսնին՝ վերին օր հավնան, իրենց էրիկ ջոկեն։

Մեկ մեկ շենլիքը դուքան կէրթան։

Մենծ ախչիկը խնձորը կ'առնի իրեն ձեռքը, սադրազանի տղեն օր գուքա, մենծ ախչիկը խնձորն էնոր կոնրկեն կը ղարկե։

---

[1] Մառայող (Ս. Բ.)։

Օրթանջիլի ախչիկը խնձորը կառնի կը իրեն ձեռքը։ Գուքան, կէրթան, էն է փաշի մանչու կոնըկին կը զարկե։

Կը մնա պզտի ախչիկը։ Ժողովուրթը պալատի առջև էրկու օր գուքա կէրթա, մարթու չի՛ զարկե, մինչև շենլիքի ետքը գուքա։

Թագավորը կըսե կը.— Էլ մարդ մնա՞ց էս քաղաքը։

Կ՚ըսեն կը.— Էլ մարթ չէ մնացե, մնացին բոստնչին ու Քյալ օղլան իրեն խզմաթչին։

Բոստնչին հալավ կառնի կը, հագնի կապե կը, կըսե. «Իշալլահ ընձի կառնե, էս թագավորի ախչիկը, էս քյալ մուռտըրին խո առնելու չէ՛»։

Քյալ օղլանն էլ ինքը իր հագուստը կը հանե օր՝ լողանա պիտի բոստնի հոլլիկի դուռը։ Եփ օր կը լողանա՝ փոստը գլխեն վեր գիջու։ Եփ օր կանանչ չըբուղը կը զարկե իր գլխուն, օսկի փարչամ կը թափի հ՚աշներուն։

Թագավորի ախչիկն է փանջարեցեն կը տեսնի Քյալ օղլանի օսկի փարչամը։

Քյալ օղլանը կը լողանա, հալավը կը հագնի խլըսի, գելնին բոստընչու հետ կէրթան թագավորի պալատի առջևեն կանցնին։

Բոստանչին առաջ կէրթա, Քյալ օղլանն էլ էնոր ետևեն կէրթա։

Եփ օր թագավորի ախչիկը խնձորը վեր կը թողնե, Քյալ օղլանի փոստին կը զարկե՝ գլուխը կը տընկա։

— Էո՞ֆ,— կըսե,— գլուխըս կոտրավ տրորելեն,— ու կը փախի։

Բոստնչին Քյալ օղլանին կը քֆրտե, կըսե կը.— Ընձի պիտի զարկեր շաշմավ քեզի զարկեց։ Ես էդիկ ղաբուլ չեմ էնե։

Թագավորն էլ կըսե կը.— Շաշմե՛լ է, թող գան, մեմ էլ էրթան։

Գուքան մեմ էլ կէրթան, բոստանչին առաջ կէրթա, մանզիլը կը գտնե։ Քյալ օղլան է ետև նոր կէրթա։

Ախչիկը խնձորը Քյալ օղլանի փոստին կը զարկե։

Քուրերը իրենց քուրոչը գլխուն զարկեն կը.— Քյալ մուռտրի ինչի՞ն թամայար։

Էն է կ՚ըսե.— Իմ ղադարս էդ է։ Ես էլ էդով պիտի խնդամ, աստված էղման է կամեցե։

Թագավորը հրամանը կէնե կը էսոնց.— Ախչկաս էլ Քյալ օղլանին էլ տարեք, էրկուսին ներս էրեք ղաստամին։

— Դե՛, էկեք,— թագավորը կըսե կը,— մյուս ախչիկներուս հարսնիքը բռնենք։

Օխտը ղաթ դավուլ-զուռնա կը բերե թագավորը, էդոնց հարսնիքը կէնեն։

Զի կը հեծնին ջլիթ կը խաղան։

Էս անգամին Քյալ օղլանը թագավորի ախչկանը կըսե կը.

— Գնա, հորեգ խնդրվի, մե ձիմ առ, էն յարոտ, քոսոտ ձին թող էղնի, ես էլ էրթամ ջլիթ խաղամ։

Թագավորը կըսե կը.— Թող էրթա էն յարոտ, քոսոտ ձին հեծնի, թող ինքն էլ էրթա խաղա։

Գուքա կըսե կը.— Մե ձիմ բերի։

Քյալ օղլանը ձին դո՛ւս կը քաշե, կեմերը կընե իղանգի, մե չուլըմ ցըգե կը ձիու վրեն, աթարը կենե ղալխան[1] ցըգե կը կոնակը, կէրթա դեղեն դուս։

Էրթալու ժամանակ քաղքի տղեքը էդոր ձիուն, իրեն գլխուն քարոտեն կը, թագավորի քյաչլակ փեսին ծաղրեն կը։

Կէրթա Քյալ օղլանը ձորի մեջ գիշնի ձիուցեն, գեշ ձին կը էրքե ձորի բերանը օր արծե, ինքը կանաչ ջրրուղը կը զարկե.

— Էյ,— կըսե,— քեղի, ընձի ստեղծող աստված, իմ էն Ղըռ ձին ու Տոռի ձին իրենց յարով, բուսաթով, իմ հագուստովս իմ առաջ գան։

Ջրբուղը զարկելուն պես ձիանները հազր քովը կը գտնըվին։

Ինքը կը հեծնի Տոռի ձին, կէրթա մեյդանը։

Մեյդան էրթլուն պես կըսեն կը.— Էս վե՞վ է, էս վե՞վ չէ, չեն ճանչե։

Իրեք քուրն է իրարի քով, փանջարի առաջը նստել են ու սեյր կէնեն ջլիթ խաղցողներուն։

Գուքա էդ Տոռի ձիավորը սագրաղանի տղին մե ջիլիթըմ կը զարկե, վեր կը թողնե ու ձին կը քշե։

Ձիավորները ետևը գըյնին, չեն կրա հասնե։

Սա անգամին մեկ էլ դառնա գուքա, փաշի տղին կը զարկե, էլի ձին վեր կը թողնե։

Քուրերը կը զարմանան։ Ջոջ քուրը կըսե.— Իմ նշանածն է։

Օրթանջիլ քուրը կըսե.— Չէ՛, իմն է։

Պզտիկ քուրը ձեն չի հանե։ Բայց գիտե, օր իրեն նշանածն է։

Գուքա արթըխ ձորին մեջ, ձին վեր կը թողնե, ջրբուղը կոխե կը իրեն տեղը, ձիաները կորին կը։

Քոսոտ ձին ինքը կը հեծնի, գուքա ինքը կղե կուզ։ Տղերքը զարկելով քարոտելով, գուքա կը մտնի իրեն տեղը։

Ձին կը զրկե թագավորին։ Էդ օրը կանցնի։ Սարախտան էլի ջլիթ կէղնի։

---

[1] Վահան (Ս. Բ.)։

Էլի թաղավորի ախչիկը քոսոտ ձին կը բերե, Քյալ օղլան հեծնի կը, էլի կէրթա, տղեքը քարոտելով, զարկելով քաղաքեն դուս կէնեն, կէրթա ձորին մեշը, էս անգամին Ղրռ ձին գուքա։

Ղրռ ձին կը հեծնի, էրկու իրեք անգամ գուքա, ինքն իրեն, ձին կը քշե էսգին-էնգին։

Թագավորը կըսե կը.— Մուղաթ կեցեք, էդ ձիավորը վ՞եվ է, բալքի գիտենաք վե՞րման էրթալը։

Գուքա է՛լի կը զարկե սագրազանի մանչուն. ձիոցեն վեր գըյնի։

Կ՛ըսեն.— Բռնե՛ք, բռնե՛ք էդ ձիավորը։

Ինչ ձիավոր կա, գըյնին ետևը։ Կը փախնի, կէրթա ձորը։

Ղրռ ձիոցեն գիշնի, կը հեծնի քոսոտ ձիուն, կզե կուզ կէրթա կը մտնի ղաստամին։ Ձին կը ղրկեն թագավորին։

Հարսնիքը կէնեն օխտը զոր, օխտը գիշեր։

Վերշ տալեն ետքը, թագավորը կը հիվընդնա։ Կանչե կը իրեն փեսեստանցը՝ սագրազանի մանչուն ու փաշի մանչուն։

Դոխտուրները դուքան, կաշեն, կըսեն կը.— Դու հեչ մի բանով չես լավնա, քեղի պետք է ասլան սիտի։

Թագավորի փեսեստանքը քովն են։

Կըսե կը.— Գնացե՛ք ընձի ասլընի կաթ բերեք։

Կէրթան փեսեստանքը մեկ անգամ, կէրթան ճամփու վըրեն չադրը զարկեն կը, իրենց համար կերուխում կէնեն, դառնան գուքան թագավորի քով, կըսեն կը.— Մենք չը գտանք։

Մեմ էլ կը ղրկե թագավորը։

Էս հեղին Քյալ օղլանը թագավորի ախչկանը կըսե կը.— Գնա թագավորին, էն գեշ ձին ուզե, ես էլ կէրթամ։

Կէրթա թագավորի ախչիկը, գեշ ձին գուզե կը բերե, Քյալ օղլանը կը հեծնի կէրթա։

Կաշե օր սագրազանի տղեն, մեմ էլ փաշի տղեն չադրի մեշը քեֆ ուրախութեն կ՛էնեն։ Ինքը կէրթա էդոնցեն կը հեռենա, գիշնի քոսոտ ձիոցեն, չըրուղը կը զարկե, կըսե.— Քեղի, ընձի ստեղծող աստված, Ղրռ ձին իրեն յարով, բուսաթով, թըվնքով իմ քովը գտնվի։

Զարկելուն պես ձին քովը գուքա։

Ձին կը հեծնի, կը քշե։ Կէրթա մեշի մեշը։ Օխտը տարի է օր ասլընի ոտքը մարխ է խրե, չիպան էլե, տուն տվե, ուռել է։ Ասլանի ինգիլտոցը[1] աֆլաթն է բռնե։

Դավռուշ էդտեղ Քյալ օղլանին ռաստ գուքա, կըսե.

---

[1] Ոռնոցը (Ս. Բ.)։

— Տղա, էս ո՞ւր կէրթաս։

Կ'ըսե կը.— Ֆիլան թագավորը հիվանդ է, կէրթամ օր ասլընի կաթ բերեմ, ասլընի կաթով կը սաղանա։

Կ'ըսե.— Ի՞նչըխ պիտի բերես։

Կ'ըսե կը.— Ես ընձի հետ աման ունիմ։

Կ'ըսե.— Քու ամանովըդ դու չես կրնա բերե։

Կ'ըսե.— Ապա ինչո՞վ կարամ բերե։

Կ'ըսե.— Կէրթաս, ասլընի ոտքը մարխ է խրե օխտը տարվանե, կէրթաս էնիկ դու կը պատռես, հեչ էրևան չես ելնի էնոր։ Օտացը կը զարկես, էնիկ շատ ֆիղա կէնե, կըսե կը. «Ա՞խ, իսան օղլի, ձեռքս ընկնեիր՝ կտոր կտոր պիտի ընեի քեզի»։ Քիչմ օր ջանը կը ռհաթնա, ասլանը կ'ըսե. «Ախ իսան օղլի, իմ քովս գայիր»։

Ինչըխ դավռուշ ըսեց, Քյալ օղլան էնմալ էրեց։

Եփ օր ասլանը ըսեց. Ախ իսան օղլի, իմ քովս գայիր, Քյալ օղլանը գնաց ասլանի քովը։

Ասլանը կ'ըսե կը.— Իսան օղլի, ուզե, մուրազդ տամ։

Կ'ըսե կը.— Իմ մուրազս քու սաղութենդ է։

Կ'ըսե.— Իմ սաղութենես քեզի ֆայդա չկա։ Հապա ուզե, մուրազդ տամ։

Կ'ըսե կը.— Իմ մուրազը էն է, օր քու կաթեդ տաս։

— Է՞յ,— կըսե,— իսան օղլի, չաթին տեղ կապեցիր։ Իմ կաթըս,— ըսեց,— հեչ մե բանով չես կրա տանե։ Իմ ձագըս կը տանես օխտը սարի հետևը կը մորթես, էնմալ որ ձենը իմ անգաջըս չընկնի։ Եթե անգաջըս ընկնի քեզ կտոր, կտոր կ'էնեմ։ Մորթը բերես կը, կաթս լլես կը մեջը, տանիս կը։

Քյալ օղլանը կառնի ձագը կէրթա օխտը սարի հետևը, կը մորթե, տիկ կը հանե, կառնե գուքա ասլընի քով։ Ասլանը կաթը կը կթե էդ տկի մեջը, կուտա տղին, կըսե,— Գնա, իսան օղլի, ուստա մարթու ես ռաստ էկե։

Կառնի գուքա կաթը, գուքա կաշե օր սագրազանի տղեն, մեմ էլ փաշի տղեն չադրի մեջը ուրախութեն կէնեն։

Քյալ օղլանը կըսե կը.— Դուք ի՞նչ մարդիկ եք։

Կ'ըսեն կը.—Մենք էկեր ենք թագավորին ասլընի կաթ տանելու։

Քյալ օղլանի քովն էլ կէղնի մե տիկրմ իծու կաթ։

Կ'ըսե կը.— Էկե՛ք ես ձեզի ասլընի կաթ տամ։

Կ'ըսեն.— Լավ, տուր, ապա ի՞նչ տանք օր տաս։

Քյալ օղլանը կըսե.— Ես ձեզնեն բան չեմ առնի։ Էկեք ես ձեր ոռին էս դաղմով մե մեկ դաղմա զարկեմ, կաթը տամ։

Կէրթան էրկու բաշանաղը խորհրդակցություն կէնեն, կըսեն իրենք իրար.— Ի՞նչ կըսես դաղմա զարկե՞։

Սագրազանի տղեն կըսե.— Թող զարկե, ի՞նչ գիտենա մենք վե՞վ ենք։

Առաջ կէրթա սագրազանի տղեն ձորի մեջը, մե դաղըմ կը զարկե. մե դաղմ էլ կը զարկե փաշի տղին։ Կուտա կը իծու կաթը, էդոնք կառնեն կէրթան։

Ետքը ինքը Ղըռ ձին վեր կը թողնի, ձին կը կորի, կը հեծնի քոսոտ ձին, կառնի ասլընի կաթը, գելնի կէրթա։

Նե կը մտնի ղաստամեջը, կըսե.— Տար, ախչի, ձին հորդ թասլիմ էրա։

Ախչիկը ձին կը տանի հորը, թասլիմ կէնե։

Թագավորը կ'ըսե.— Ախչի, Քյալ օղլանն էկա՞վ։

Կ'ըսե կը.— Հա', էկավ։

Կ'ըսե կը.— Ըսե գա քովը։

Քյալ օղլանը գելնի կզե կուզ կէրթա։ Կաշե օր բաշանաղները հոն նստած են, շիշով իծի կաթը սեղանի վրեն է։

Դոխտուրները նստած են։ Էդիկ էլ տարավ տկով կաթը գրեց սեղանի վրեն։

Դոխտուրներն էկան տեսան օր Քյալ օղլընի բերածը ասլընի կաթ էր, սագրազանի ու փաշի տղին բերածը՝ իծի կաթ էր։

Թագավորը ըսեց.— Ապրի Քյաչլակ փեսեն, դու ո՞ւմ մանչն ես։

Էն էլ կ'ըսե կը.— Ես քյաթան Փատիշի[1] մանչն եմ։

Ու գլխեցեն վեր կառնե գառի տիկը։ Ի՞նչ տեսնին կը՝ ոսկեղեն ծամեր։ Իրեն պատմութենն է կէնե կը։

Թագավորը ասլնի կաթը խմե կը, կառողջանա։

Իդոր հարսանիքը կէնե օխտը զօր, օխտը գիշեր։

Քյալ օղլանին կը նստեցնե իրեն թախտը թագավոր։ Մեկել Փեսեստանց էրեսը կը թքնե։

Կ'ըսե.— Գնացե՛ք, դուք անամոթ մարդիկ եք։

Քյալ օղլանը կ'ըսե կը.— Ապրած կենա թագավորը, բերեք ես իդոնց վրեն նիշան էլ ունիմ։

Բերեն կը, բանան կը տեսնեն դաղերը։

Թագավորը կ'օրհնե Քյալ օղլանին։ Կ'ըսե կը.—Հալալ էղնի քեզ էս թախտը մորդ ծծած կաթի պես։

Էս հասավ իրեն մուրազին, դուք էլ՝ ձեր։

---

[1] Փատիշահ թագավորի (Ս. Բ.)։